# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 29-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-Ի ԹԻՎ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14 հոդվածի պահանջներով, որոշում եմ՝

Հաստատել Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի ավագանու 2020թ հուլիսի 31-ի թիվ 4 հերթկան նիստի օրակարգը՝

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2020թվականի բյուջեի առաջին կիսամյակային հաշվետվության մասին /Զեկ. Փ. Դանիելյան/
2. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2020 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու մասին /Զեկ.՝ Փ. Դանիելյանը/
3. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում լրացում կատարելու մասին: /Զեկ. Կ. Մարգարյանը/
4. Լճաշենի համայնքապետարանի և «Լճաշեն համայնք. Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ»-ի միջև 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին կնքած «Էներգախնայողության ծառայությունների մատուցման համաձայնագիր N 1» -ի պայմաններին հավանության տալու մասին:
5. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 05-040-0260-0043 ծածկագրի 0.86077հա, 05-040-0253-0204 ծածկագրի 0.39729 հա, 05-040-0260-0044 ծածկագրի 3.32242 հա մակերեսով հողամասերը ուղակի վաճառելու մասին:/ Զեկ. Գ. Խաչատրյանը/
6. Լճաշեն համայնքի ղեկավարին, համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողներին և հայեցողական պաշտոն զբաղեցնողներին իրենց հերթական արձակուրդների հետ լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար տալու մասին/Զեկ. Կ. Մարգարյանը/
7. Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցի առաջին դասարան հաճախող երեխաներին, դպրոցական առաջին անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու մասին /Զեկ. Կ. Մարգարյան/
8. Լճաշեն համայնքից 2020թվականի ամառային զորակոչին մասնակցող զորակոչիկներին դրամական օգնություն տրամադրելու մասին /Զեկ. Կ. Մարգարյանը/
9. Լճաշեն համայնքի մի խումբ բնակիչների դրամական օգնություն տրամադրելու մասին: /զեկ. Կ. Մարգարյանը/
10. Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու Գեղարքունյաց թեմի դիմումի մասին /Զեկ. Կ. Մարգարյան/
11. Լճաշեն համայնքում իրականացվող <<Երիտասարդների մասնակցության խթանում՝ սեփական բարեկեցության կերտմանը>> ծրագրին հավանություն տալու մասին /Զեկ. Կ. Մարգարյանը/
12. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի վարչական սահմաններում գտնվող 05-040-0208-0061 ծածկագրի հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին: /Զեկ. Գ. Խաչատրյանը/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 30-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2020թ առաջին կիսամյակի բյուջեն կատարվել է 105.3%-ով, պլանով նախատեսված 68100.0 հազար դրամի դիմաց կատարվել է 71699.1 հազար դրամ, պլանը գերակատարվել է 3569.1 հազար դրամ, նույն ժամանակահատվածի համար 2019թ պլանը կատարվել է 99.1 %-ով:

2020թ համայնքի բյուջեի սեփական եկամուտները կատարվել է 120%, այսինքն պլանով նախատեսված 13245.1 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 15890.7 հազար դրամ, այսինքն պլանը գերակատարվել է 2645.6 հազար դրամ: Նույն ժամանակահատվածի համար 2019թ պլանը կատարվել է 95.7%-ով:

2020թ բյուջեի ծախսային մասը առաջին կիսամյակում կատարվել է 32.4%-ով, այսինքն պլանավորված 161784.3 հազար դրամի դիմաց կատարվել է 52350.6 հազար դրամ, իսկ վարչական բյուջեն կատարվել է 38.1 %-ով, պլանավորված 136200 հազար դրամի դիմաց կատարվել է 51771.5 հազար դրամով.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1 մասի 5-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի 2020թ բյուջեի առաջին կիսամյակի հաշվետվության մասին հաղորդումը/կից ներկայացվում է հավելված 1;2;3;4;5;/:
Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 31-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1 մասի 5-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> օրենքի 56 հոդվածի 2-րդ մասի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի 2020թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Համայնքի վարչական բյուջեի ընդհանուր բնույթի հանրային ծառայություն բաժին 01 խումբ 6 դաս 1 ծրագիր 51 ներկայացուցչական ծախսեր հոդված 4237-ից 300.0 հազար դրամ, պահուստային ֆոնդ բաժին 11 խումբ 1 դաս 2 ծրագիր 51 հոդված 4891-ից 1500.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժին 01, խումբ 6 դաս 1 ծրագիր 51 ընդհանուր բնույթի այլ ծառայություններ հոդված 4239-ին 300.0 հազար դրամ և հաստատել 300.0 հազար դրամ, տեղեկատվական ծառայություն հոդված 4234-ին 200.0 հազար դրամ և հաստատել 600.0 հազար դրամ, մշակութային ծառայություն բաժին 08 խումբ 2 դաս 3 ծրագիր 51 Այլ կապիտալ դրամաշնորհներ հոդված 4657-ին 500.0 հազար դրամ և հաստատել 500.0 հազար դրամ, սոցիալական պաշտպանություն բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 54 այլ նպաստներ բյուջեից հոդված 4729-ին 800.0 հազար դրամ և հաստատել 1800.0 հազար դրամ:
2. Համայնքի ֆոնդային բյուջեի տնտեսական հարաբերություններ բաժին 04 խումբ 2 դաս 4 ոռոգման համակարգի կապ. վերանորոգում հոդված 5113-ից 2300.0 հազար դրամ պակասեցնել և ավելացնել կրթություն, բաժին 09 խումբ 1 դաս 1 ծրագիր 51 շենք և շինությունների կապ. վերանորոգում /<<Մանչուկ>> մանկապարտեզ ՀՈԱԿ/ հոդված 5113-ին 2300.0 հազար դրամ և հաստատել 7300.0 հազար դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից;

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 32-Ն

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 1 մասի 5-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի հնգամյա զարգացման ծրագրում կատարել հետևյալ լրացումը՝

<u><<Համայնքում սելավատարի կառուցում>></u>

/Ոլորտային կապիտալ ծրագրի անվանումը/

1. **<u>Ծրագրի Նպատակը</u>**- աղետների ռիսկերի նվազում

2. **<u>Ծրագրից ակնկալվող արդյունքները</u>** - Ուժեղ անձրևների, սելավների, հեղեղումների ժամանակ համայնքի փողոցների անցանելիության ապահովում, ջրահեռացման համակարգի բարելավում, աղետների ռիսկերի նվազեցում

3. **<u>Ծրագրի հիմնական շահառուները</u>** – համայնքի բնակիչներ

4. **Ծրագրի ֆինանսական աղբյուրները**

**ա/ համայնքի բյուջե՝ - 600 000 դրամ**

**բ/ այլ՝ պետ. բյուջե հազ. դրամ**

5. **Ոլորտային կապիտալ ծրագրի ամփոփագիր**

Աղյուսակ

| N | Ոլորտային կապիտալ ծրագրի բաղադրիչ | Բաղադրիչի մոտավոր արժեք /հազ.դր./ | Ցուցանիշներ | Թիրախային արժեքներ | | | | | Սկիզբ-Ավարտ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | 2017 | 2018 | 2019 | 2020 | 2021 | |
| **1.** | Սելավատարի կառուցում | 600.0 | 500 մ | - | | | 600.0 | | 2020-2021 |
| | | | | | | | | | |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 33-Ա

### ԼՃԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ ԵՎ <<ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ>>-Ի ՄԻՋԵՎ 2019Թ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ԿՆՔՎԱԾ << ԷՆԵՐԳՈԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1>>-Ի ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 82 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լճաշենի համայնքապետարանի և <<Լճաշեն համայնքի կլիմայական շրջանառու ներդրումային հիմնադրամ>>-ի միջև կնքված պայմանագրի և N 1 համաձայնագրի դրույթները, համայնքի ավագանին որոշում է

1. Հավանություն տալ «*Լճաշեն գյուղական համայնքում փողոցային լուսավորության էներգախնայողության միջոցառումների իրականացման*» նախագծի իրականացմանը նպատակաուղղված Լճաշենի համայնքապետարանի և «Լճաշեն համայնք. Կլիմայական քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ»-ի միջև 2019թ.-ի դեկտեմբերի 3-ին կնքած «Էներգախնայողության ծառայությունների մատուցման համաձայնագիր N 1» -ի թիվ 2՝ «Վճարումների չափը և կարգը, փոխհատուցումներ» կետի պայմաններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 34-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 05-040-0260-0043 ԾԱԾԿԱԳՐԻ 0.86077 ՀԱ, 05-040-0253-0204 ԾԱԾԿԱԳՐԻ 0.39729 ՀԱ, 05-040-0260-0044 ԾԱԾԿԱԳՐԻ 3.32242 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 05-040-0260-0043 ծածկագրի 0.86077հա, 05-040-0253-0204 ծածկագրի 0.39729 հա, 05-040-0260-0044 ծածկագրի 3.32242 հա մակերեսով հողամասերում կառուցապատման աշխատանքներ իրականացնելու համար, անհրաժեշտություն է առաջացել հողամասերը օտարել, ուստի ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18 հոդվածի 21 կետի, Հողային օրեսգրքի 48 հոդվածի 4-րդ կետի, 66 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 22.07.2020թ թիվ 0-50/132 գրությունը և 24.07.2020թ <<Իշտիկունի արևային>> ՍՊԸ-ի տնօրեն Մայիս Սարգսյանի դիմումը, համայնքի ավագանին որոշում է

1. Թույլատրել օտարել Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող ներքոնշյալ հողամասերը՝

- Ավազի հանք 4 հասեում գտնվող 05-040-0260-0044 ծածկագրի 3.32242 հա մակերեսով հողամասը/ նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, գործառնական նշանակությունը.՝ էներգետիկայի/
- Ավազի հանք 5 հասցեում գտնվող 05-040-0253-0204 ծածկագրի 0.39729 հա մակերեսով հողամասը/ նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի/
- Ավազի հանք 6 հասեում գտնվող 05-040-0260-0043 ծածկագրի 0.86077 հա մակերեսով հողամասը/ նպատակային նշանակությունը՝ էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների, գործառնական նշանակությունը՝ էներգետիկայի/

2. Օտարման գին սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ - 342 ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

| | | |
|---|---|---|
| Կողմ -5 | Դեմ -1 | Ձեռնպահ -0 |
| ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ | ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ | |
| ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ | | |

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 35-Ա

## ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԻՐԵՆՑ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻԱՆՎԱԳ ԱՐՁԱԿՈՒՐԴԱՅԻՆ ՎՃԱՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով 2020 թվականի բյուջեի կիսամյակային հաշվետվությունը, արձանագրելով համայնքի սեփական եկամուտների բարձր աճ՝ 120% և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 219 հոդվածի 1 մասի 2 կետի, <<Համայնքային ծառայության մասին>> օրենքի 31 հոդվածի 1 կետի բ ենթակետի, Հանրային ծառայության մասին օրենքի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 26.06.2020թ զեկուցագիրը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի ղեկավարին, հայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայող և հայեցողական պաշտոն զբաղեցնող աշխատողներին իրենց հիմնական արձակուրդային վճարի հետ տալ լրացուցիչ միանվագ արձակուրդային վճար՝ միջին ամսական աշխատավարձի չափով:
2. Սույն որոշումը տարածվում է 2019-2020թթ համար հասանելիք վճարովի արձակուրդից օգտվող և օգտված ծառայողների վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստարգրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 36-Ա

## ԼՃԱՇԵՆԻ ԱՇՈՏ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ, ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 46 հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 30.07.2020թ թիվ 104-Ա որոշման դրույթները, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը և 30.07.2020թ թիվ 104-Ա որոշմանը:
2. Համայնքի վրաչական բյուջեի նախակրթական ուսուցում բաժին 09 խումբ 2 դաս 2 ծրագիր 51 հոդված 4261 հատկացնել 450.0 հազար դրամ, 2020-2021 ուսումնական տարում Լճաշենի Աշոտ Տեր-Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց առաջին դասարան հաճախող երեխաներին՝ դպրոցական առաջին անհրաժեշտ պարագաներ ձեռք բերելու համար: /Կից ցուցակ /
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 37-Ա

## ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 40 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Լճաշեն համայնքից 2020թ ամառային զորակոչին մասնակցող զորակոչիկներին համայնքի վարչական բյուջեի բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 54 հոդված 4729-ից տրամադրել դրամական օգնություն, յուրաքանչյուրին 10000-ական դրամ:
2. Համայանքի վարչական բյուջեի պաշտպանություն բաժին 02 խումբ 3 դաս 4 ծրագիր 51 կենցաղային և հանրային սննդի նյութեր հոդված 4267-ից յուրաքանչյուր զորակոչիկի ծնողի տրամադրել 20000-ական դրամ, զինվորի երդման արարողակարգին մասնակցելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 38-Ա

## ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի, 48-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 6-րդ հոդվածի, 28-րդ հոդվածի II բաժնի 1-ին կետի զ ենթակետի , <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետի , 18-րդ հոդվածի 4-րդ կետի, և հիմք ընդունելով համայնքի ավագանու կանոնակարգը 24-րդ կետի, ավագանու 22.01.2020թ թիվ 6-Նորոշման դրույթները և նոր կորոնավիրուսի համավարակի հետ կապված մեկուսացված անձանց օգնություն տրամադրելու մասին ՀՀ կառավության հրահանգը, համայնքի ավագանին որոշում է

Հաշվի առնելով, որ Լճաշեն գյուղի բնակիչներ Կարապետյան Քաջիկի, Սանամյան Գագիկի, Հովհաննիսյան Արտուշի, Միերյան Արմինեի, Նավասարդյան Երազիկի և Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում մեկուսացված Մարգարյան Գարիկի, Մարգարյան Գագիկի, Ղազարյան Անդրանիկի և Գևորգյան Պատվականի ընտանիքները գտնվում են սոցիալական ծանր պայմաններում, ուստի համայնքի վարչական բյուջեի Այլ նպաստների պահպանման ծախսերի բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 54 հոդված 4729 հատկացնել 350.0 հազար դրամ դրամական օգնություն

- Կարապետյան Քաջիկին - 30.0 հազար դրամ
- Սանամյան Գագիկին - 50.0 հազար դրամ
- Հովհաննիսյան Արտուշին- 50.0 հազար դրամ
- Միերյան Արմինեին - 50.0 հազար դրամ
- Մարգարյան Գարիկին - 50.0 հազար դրամ
- Մարգարյան Գագիկին - 30.0 հազար դրամ
- Ղազարյան Անդրանիկին - 30.0 հազար դրամ
- Գևորգյան Պատվականին- 30.0 հազար դրամ
- Նավասարդյան Երազիկին - 30.0 հազար դրամ

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 39-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆՅԱՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄԻ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Քննարկելով համայնքի ղեկավարին ուղղված Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու Գեղարքունյաց թեմի դիմումը դրամական օգնություն տրամադրելու մասին և Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 6-րդ հոդվածի, <<Սոցիալական աջակցության մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու կանոնակարգը, ավագանու 22.01.2020թ թիվ 06-Ն որոշման դրույթները, որոշում եմ՝

1. Բավարարել Հայաստանյաց Առաքելական Սուրբ եկեղեցու Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Պարթև վարդապետ Բարսեղյանի դիմումի պահանջները և համայնքի վարչական բյուջեի Այլ նպաստների պահպանման ծախսերի բաժին 10 խումբ 7 դաս 1 ծրագիր 54 հոդված 4729 փոխանցել 50.0 հազար դրամ՝ 16021100090800 հաշվի համարին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 40-Ա

## ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ <<ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԿԵՐՏՄԱՆ>> ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 52 հոդվածի 6 կետի պահանջներով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանության արժանացնել համայնքում իրականացվող <<Երիտասարդների մասնակցության խթանում՝ սեփական բարեկեցության կերտման>> ծրագրին, որի նպատակն է զարգացնել զբոսաշրջությունը և ճանաչողությունը համայնքում:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ծրագրի շրջանակներում իրկանացվող համայնքի ներդրումների նկատմամբ ցուցաբերել պատրաստակամություն
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Լճաշեն, (0261) 27285, (0261) 27417, lchashen.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 41-Ա

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՃԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-040-0208-0061 ԾԱԾԿԱԳՐԻ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 43 հոդվածի և հիմք ընդունելով ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ թիվ 186-Ն հրամանը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Գեղարքունիքի մարզի Լճաշեն համայնքի վարչական սամաններում գտնվող 05-040-0208-0061 ծածկագրի 0.35525 հողամասը ճանաչել համայնքային, քանի որ ի սկզբանե այս հողամասը համարվում էր համայնքային, սակայն քարտեզագրման ժամանակ թույլ տրված սխալի հետևանքով դարձել է քաղաքացու սեփականություն:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին դեմլու Անշարժ գույքի կադաստր, համայնքի էլ. քարտեզում փոփոխություն կատարելու համար:
3. Սուն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՍԼԱՆՅԱՆ ԽԱՉԻԿ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՀԱԿՈԲ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԵԼԻՔՅԱՆ ՌԱԶՄԻԿ

ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ՍԻՄՈՆՅԱՆ ԱՐՄԵՆ

**Համայնքի ղեկավար՝ ԿՈՐՅՈՒՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ**